Դասավանդման ենթակոմիտե
ժողովի գրառումներ
6-18-2020

Փոքր խմբի հանդիպման խնդիրն էր վերանայեել տարրական, միջանկյալ և միջնակարգ դպրոցների ընթացիկ դասացուցակների մոդելները և այնուհետև կիսվել մեծ խմբի հետ: Բոլոր 3 մոդելներն ունեն առավոտյան/կեսօրից հետո մոդելը և ուրբաթ օրերին՝ լրիվ հեռակա ուսուցման մոդելով: Շրջանի տարբեր թիմեր նույնպես աշխատում են լրացուցիչ դասաժամեր տալ անգլերեն սովորողներին և Հատուկ ուսուցման ծառայություն ստացող աշակերտներին, եթե հնարավոր է:

Միջնակարգ դպրոցի ենթախումբը զեկուցել է, որ միջանկյալ դպրոցների տնօրեններն ու ուսուցիչները հանդիպել և քննարկել են առկա բազմաթիվ դասացուցակներ մեկ ընդհանուր առաջարկություն անելու համար: Իմաստը այնպիսի դասացուցակ կազմելն է, որ այն բոլոր դասացուցակներից ամենաշատն ընդգրկի: Արդյունքում այն դասացուցակն է, որն ընդգրկում է առավոտյան/կեսօրից հետո դասընթացներ, բոլոր 6 դասընթացները, բայց սահմանափակ մոդել է (block schedule model), որպեսզի աշակերտներն ունենան օրական 3 դաս: Խմբի կարծիքով, շատ կարևոր է, որ աշակերտները հանդիպեն իրենց բոլոր ուսուցիչների հետ՝ ծանոթանալու և նորմալ դպրոցական օրվա անցումը հեշտությամբ կատարելու համար, երբ ժամանակը գա: Եթե թույլ տան դպրոց վերադառնալ կիսամյակի մեջտեղում, ապա աշակերտները միանգամից կսկսեն իրենց բոլոր դասերը: Եթե ստիպված լինենք և ուսումը շարունակենք 100% հեռակա ուսուցման մոսելով, ապա կիսամյակի մնացած օրերը կբաժանենք 2 մասի և կդասավանդենք 3 դաս և հետո մնացած 3 դասերը:

Միջնակարգ դպրոցի դասացուցակը մի քանի տարբերակներ ունի, ընդգրկելով 2 փոփոխական դասացուցակ (block schedules) և քչացված դասացուցակ: Սա հնարավորություն կտա աշակերտներին ունենալ 0 և 7-րդ դասընթացը և շատ զբաղված չլինել համակարգչային աշխատանք կատարելով: Մեկ տարբերակը թույլ կտա ունենալ 2 դասընթաց 6 շաբաթ տևողությամբ, իսկ երկրորդը՝ 3 դասընթաց, 10 շաբաթ տևողությամբ: Գոյություն ունի նաև միջանկյալ դպրոցի դասացուցակի նման դասացուցակ՝ 6 դասընթացով: Անդամներից մեկն առաջարկեց, որ միջնակարգ դպրոց հաճախեն շաբաթը 2 լրիվ օր, իսկ 3 օրն անցկացնեն հեռակա ուսուցմամբ: Նա հավելյալ տեղեկություն կհավաքի իր կոլեգաներից և կզեկուցի խմբին: Բավականին քննարկում կատարվեց, թե որ օրը պետք է հանդիսանա լրիվ հեռակա ուսուցման օր աշակերտների համար, և այդ նույն օրը լինի ուսուցիչների պլանավորման օր: Բուն դասացուցակով այդ օրը կհանդիսանում է ուրբաթ օրը:

Քննարկվեց նաև, որ չորեքշաբթի օրը լինի մաքրման օր, իսկ ուսուցիչների համար վերնայման և պլանավորման օր: Երկուշաբթի օրը նույնպես քննարկվել է որպես հնարավոր օր, քանի որ եթե երկուշաբթին տոն օր լինի, ապա աշակերտները կրթական օր չեն կորցնի: Հաջորդ հարցաթերթիկով կհարցնենք ծնողների կարծիքը: Աշակերտների ներկայացուցիչները չէին կարողանում որոշել երկուշաբթի և չորեքշաբթի օրերի միջև, բայց ճկուն են հարցին նայում:

Հատուկ ուսուցման բաժինն աշխատում է դպրոցների տնօրենների հետ կրթական պլան մշակելու համար, որն ամենալավ կերպ կգործի մինչ այժմ ներկայացված բոլոր մոդելների ընթացքում: Տարրական և միջնակարգ դպրոցներն աշխատում են ամենաշատ ժամանակը տալ Հատուկ ուսուցման և անգլերեն սովորող աշակերտներին անձամբ դպրոցում լինելու համար:

Կան նաև նյութատեխնիկական և մաքրման խնդիրներ, որոնք պետք է լուծել աշակերտներին ավելի երկար ժամով դպրոցում պահելու համար, ներառնելով լուծել ճաշի մատուցման խնդիրը և Քրոմբուկների մաքրումը, եթե չկարողանանք յուրաքանչյուր աշակերտին իրեն Քրոմբուկով ապահովել դպրոցում եղած ժամանակ:

Խմբի նպատակն է դասացուցակի առաջարկներ անել ավելի մեծ խմբի համար: